կազմեց ընտիր և բարեկարգ ծուխ և երբէք չհամաձայնեցաւ կառավարութիւնից ռոճիկ ստանալ։

Միայն 1870 թ. Փարիզի պաշարման միջոցին առ ժամանակ իւր մասնագիտական պաշտօնի շրջանից դուրս եկաւ, նախ զինուորական հիւանդանոցները կազմակերպելու և ապա Սէն-Մարտէնի թատրոնում հոգևոր քարոզութեանց մասնակցելու համար, որոնք շատ նպաստեցին Փարիզի բնակչաց մէջ բարոյական եռանդն ու հաստատակամութիւն պահպանելուն։ Այս քարոզներն, ասում է Մ. Լեգուվէն, որ նոյնպէս մասնակցում էր, սովատանջ քաղաքում համազօր էին հաց բաժանելուն։ Ոչ մի առենաբանի այնպէս չէին լսում և ծափահարում ինչպէս Բերսիէին։ Հասարակական ծառայութեանց համար 1871 թ. նա ստացաւ Պատուաւոր Լեգէոնի շքանշանը։ Նա հրապարակախօսութեան ճարտարապետն էր և գեղեցիկ խօսել սովորեցաւ, նախ գրաւորապէս աշխատելով։ Նորա ոճը կանոնաւոր է, շատ պարզ և ոչ բարձրաթռիչ։ բայց երբ հանգամանքները պահանջում են նա ինքն ըստ ինքեան ճոխանում է և զօրանում և այն յուզմունքն ու ազդեցութիւնն է գործում, որ սովորաբար հետևանք է լինում մեծ ճարտարախօսութեան զօրութեան։

# ԱԶԳԱՅԻՆ

## Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ

Յայտնի է ամենքին որ Ս. Էջմիածնի ձեռագիրների ժողովածուն մեր ազգային ամենամեծ հարստութիւններից մէկն է, թերևս առաջինը, և թէ այս ձեռագիրների անաղարտ պահպանութեան գործը արժանի է ամենամեծ հոգածութեան։ Այս մասին խօսելն իսկ աւելորդ կլինէր մեր կողմից, եթէ որ, այս երկրորդ անգամ «Արևելք» լրագիրը չհրատարակէր անհիմն լուրեր՝ իբր թէ սոյն մատենադարանը անինամ դրութեան մէջ գտնուելիս լինի, ոնհոգութեան մատնուած, ևլն։ Առաջին նամակը, որ «Արևելք»-ը տպել էր այս մասին, առնելով «Մշակ»

լրագրից, հերքուեցաւ մանրամասնաբար նոյն իսկ Մշակի մէջ, և ճշմարտասիրութիւնը կպահանջէր գոնէ որ Արևելքն և ասէր այդ հերքումը, մանաւանդ որ խնդիրը այսպիսի ծանրակշիռ հաստատութեան մասին էր։ Սորա փոխանակ Արևելքը, թիւ 1838, նորից կկրկնէ թէ «Ս. Էջմիածնի թանգարանին հնութեանց կամ ձեռագրաց պահպանութիւնն չէ ի բաղձացեալ վիճակի»։

Դորա դէմ մենք կասենք, որ մատենադարանի ձեռագիրների թիւը 2000-ից այժմ բարձրացել է 3000-ի։ Այս մի այնպիսի պերճախօս պատասխան է, որի դէմ չէ կարելի դատարկ և անհիմն ենթադրութիւններով խօսել։ Իսկ ինչ կվերաբերի մատենադարանի և թանգարանի պահպանութեան, այդ մասին կարող են վկայել այն բազմաթիւ այցելուները, որոնք գրեթէ ամենայն օր կյաճախեն Մայր Աթոռս և իւրեանց աչքովն կըտեսնեն բոլոր այն կարգաւորութիւնը, մաքրութիւնը, մեծ հոգածութիւնն ու խնամքը, որով կպահպանուին թէ մատենադարանը և թէ թանգարանը։

Խմբագրութիւնս կյուսայ, որ այս պաշտօնական յայտարարութիւնը բաւական կլինի յոռետեսների՝ Ս. Էջմիածնի մատենադարանի և թանգարանի մասին հրատարակած սուտ ու խարդախամիտ լուրերն ու տեղեկութիւնները հերքելու յաչս բարեմիտ և բանիմաց աղգայնոց։

---

Երևանի Հայոց թեմական դպրոցի Հոգաբարձութիւնը խնդրում է հրատարակել ի լուր աղգայնոց հետևեալը.

Երևան քաղաքի բնակիչք երեք եղբարք Պ. Պ. Յակոբջան (այժմ Հանդուցեալ), Զաքար և Յովակիմ Գէորգեանք, ի յիշատակ նոյն հանդուցեալ Յակոբջանի վաղամեռիկ որդի Նահապետի, միաբան ծախքով կանգնեցրին Երևանի թեմական դպրոցի շէնքին կից մի հոյակապ դահլիճ, որը ամսոյս 7-ին մեծապատիւ եղբարք Պ. Պ. Զաքարն և Յովակիմ յանձնեցին դպրոցին ի սեփականութիւն։ Այս պատճառով Երևանի թեմ-

դպրանոցի Հոգաբաձութիւնը հրապարակաւ յայտնում է վերոյիշեալ Պ. Պ. Զաքար և Յովակիմ Գէորգեաններին իր խորին շնորհակալիքը։

---

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

### ՔԱՂՈՒԱԾՔ ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ

---

16 փետր. Իսահակ քահանայն Սարգսորապատ գեղջ Երևանայ գաւառի, որ կատարած էր Գէյչլուեցի Գեղամայ Տէր Ստեփանեանի պսակը առանց յայտարարութեան ծխատէր քահանայի և հրամանի գործակալին՝ ենթարկուեց ըստ հրամանի Սրբազան Սինօդի քսան և հինգ ռուբլի տուգանաց, յօգուտ Ճեմարանի Ս. Աթոռոյս, ի զգուշութիւն իւր և այլոց քահանայից, որ և հրամանագրուեց նորան դարձուցանել ստացած պսակագրամը ծխատէր քահանային։

---

28 Փետր. Բարեհաճութեամբ Նորին Վեհափառութեան Ս. Սինօդը փոխանորդ նշանակեց Ալեքսանդրապոլու՝ բարեշնորհ Գարեգին վարդապետ Սաթունեանցին, որ յառաջիկայ մարտի 1-ից ստանձնելու է իւր այդ նոր պաշտօնը։

---

28 Փետր. Բարեհաճութեամբ Նորին Վեհափառութեան Ս. Սինօդը փոխանորդ նշանակեց Նոր-Նախիջևան քաղաքին՝ բարեշնորհ Կիւրեղ վարդապետ Սրապեանցին և հրամանագրեց նորան մարտի 1-ից ստանձնել իւր այդ նոր պաշտօնը։

---

28 Փետր. ըստ կոնդակի Նորին Վեհափառութեան, փետր. 20, թ. 65, Ս. Սինօդը Նոր-Նախիջևանի և Բեսարաբիոյ վի-